Դեսումեանի եղբայրներին. այդպէս յայտնի է դառնում նաեւ նրանց՝ Սեմնքերիմ անունով պապը, որը ենթադրաբար կարող է համարուել Կոչիկ անապատում երկիցս յիշատակուած Շահան իշխանի հայր Դեսումի եղբայրը կամ հօրեղբօրորդին:

Ընդմին, Դեսում անունը մէկ անգամ յիշուած է նաեւ Զարեգդարի վանքի, ըստ ամենայնի, ԺԳ. դարի մի փոքրածաւալ նուիրատուական վիմագրում (եկեղեցու հիւսիսային պատին, ներքուստ, 6 տողանոց եւ անթուակիր). «Ա՛՛՛՛՛՛՛՛՛՛վ, ես՝ Դեսում, միաբանեցա ս՛՛՛՛՛՛՛՛՛՛ր ուխտիս, տվի :Ա: գիրք... {տվ}ին :Ա: ժամ ս՛՛՛՛՛՛՛՛՛՛ր Ակոբի տաւնին»[58]: Սակայն այդ տարածքի տարբերակն աւելի քիչ է հաւանական նաեւ այն պատճառով, որ հէնց նրանից մի փոքր հեռու՝ Վաղուհասին արեւմուտքից հարեւան Վարդանագոմեր (Վարդանկու) գիւղատեղիի եկեղեցու բարաւորին է պահպանուել արձանագրութիւն՝ գրուած «Տաւղան իշխանի ամուսին» եւ Գրիգոր Մեծ իշխանի դուստր Հասանի (ընագրում՝ Հասն) անունից, որն արդէն Բ. Ուլուբաբեանի կողմից իրաւացիօրէն համադրուել է Մխիթար Գոշի նշած թուրքմէն ցեղապետի այրու հետ[59]: Տեղին նշենք, որ այդ չինարարական վիմագիրը ժամանակին ընթերցուել է Մեսրոպ Տէր-Մովսէսեանի կողմից[60], իսկ վերջերս այն լուսանկարել եւ ճշգրիտ վերծանել-սրբագրել է ճարտարապետ Սամուէլ Այվազեանը (բաւականին միաձեւ յստակ տառերով եւ լաւ պահպանուածութեամբ վիմագրի 10 տողերից ութը կիսակլոր են, իսկ վերջին երկու՝ բարաւորի կիսաշրջանի կենտրոնում տեղադրուած կարճ տողերը՝ հորիզոնական): Լուսանկարը եւ վերծանութիւնը սիրալիրաբար տրամադրելու համար մեր երախտագիտութիւնը յայտնելով ուսումնասիրողին՝ օգտագործում ենք առիթը՝ այդ ուշագրաւ բնագիրը տալու ամբողջութեամբ.

«Ի թվիս :ՈԿԴ: էր [=1215 թ.]*: Ի վերջին եւ ի նվաղել ժամանակիս, / ես՝ Հաս[ա]ն* [?]*, դուստր Մեծին Գրիգորոյ, ամուսին Տաւղան/այ իշխանի, չինեց[ի] զեկեղեցիս ի փրկութիւն իմ / եւ առն իմո[յ]: Առաջն՝ որ լինի զաւագ եկ[եղ]եցի/ն՝ առն իմոյ արասցեն: Եթե ոք յիմ/ոց կամ յաւտարաց խափանել ջ/անայ՝ մեր մեղացն պարտակ/ան է. կատարիչ[ք]ն աւրհ/նին/ Ա՛՛՛՛՛՛՛՛՛՛յ»: Պահպանում ենք Հաս[ա]ն բառի կողքին Մ. Տէր-Մովսէսեանի դրած հարցական նշանը, քանի որ տուեալ անձնանունն արական է եւ մեզ յայտնի չէ նրա իգական տարբերակի օգտագործման ուրիչ դէպք (այդպէս՝ նաեւ Հր. Աճառեանին)[61]:*

58 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 133 (N 444):

59 **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 121:

60 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, *Արցախ*, էջ 115 (N 383):

61 **Հ. Աճառեան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, Եր., 1946, էջ 51): Երախտագիտութիւնս եմ յայտնում ուսուցչիս՝ Պարոյր Մուրադեանին՝ վերծանութեան՝ փորագրողի ինչ-ինչ վրիպումների պատճառով առաջացած բարդ տեղիների քննարկման համար: Դրանցից 4-5-րդ տողերի «Առաջն՝ որ լինի զաւագ եկ[եղ]եցին՝ առն իմոյ արասցեն» հատուածը հնարաւոր է թուում հասկանալ իբրեւ՝ «Առաջին [ներթին]՝ երբ [պատրաստ] լինի եկեղեցու աւագ [խորան]ը՝ թո՛ղ [պատարագն] իմ ամուսնու [հոգու յիշատակի] համար անեն»: Հմմտ., օր., Գրիգոր Հէջուրի՝ Գօշավանքի Ս. Գրիգոր կաթողիկէի շինարարական վիմագրում՝ «...{ե}տուն զաւագ խորան՝ ինձ պատար{ագել}» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. VI, *Իջեւանի շրջան*, Կազմեցին **Ս. Ա. Աւագեան, Հ. Մ. Ջանփոլադեան**, Եր., 1977, էջ 106, N 236, լուսանկարը՝ տախտ. ԽԸ). Նաեւ Դադիվանքում Արզուխաթունի շինարարական վիմագրում՝ «հաստատեցաք կամակցութ[եաս]բ եղբարցս՝ զաւագ խորանի զպատարագն յանուն վերագրելոցս կատարել...» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 198-199, N 708, լուսանկարը՝ տախտ. XXIX; **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, Եր., 1999, էջ 110, N 1):